ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/155

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Սիգռամ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 21.06.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2021թ. թիվ 26/26-1/9653-2021 գրությամբ «Սիգռամ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.06.2021թ. թիվ ՊՆ/02/3007-2021 գրության հիման վրա, 15.06.2021թ. թիվ 26/26-1/9653-2021 գրությամբ նախաձեռնել է «Սիգռամ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սիգռամ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սիգռամ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 24.06.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-12/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սիգռամ» ՍՊԸ-ն:

«Սիգռամ» ՍՊԸ-ի իրավաբանական /գտնվելու վայրի/ հասցեն է՝ Արմավիրի մարզ, գ. Նորապար 8:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել՝ «Սիգռամ» ՍՊԸ-ին ճանաչել ընթացակարգի ընտրված մասնակից, որի հետ անգործության ավարտից հետո կառաջարկվի կնքել պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-12/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով Օրենքի 10-րդ հոդվածի պահանջը:

«Սիգռամ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 13.05.2021թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 27.05.2021թ. ներառյալ:

«Սիգռամ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ընդունել է armeps համակարգի միջոցով ուղարկված պայմանագրի շնորհումը:

«Սիգռամ» ՍՊԸ-ն 27.05.2021թ.՝ ստորագրած պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով փոստային առաքման միջոցով Արմավիրի մարզի ք. Արմավիրի փոստային ծառայությունից (ՍՊԸ-ի գտնվելու վայրի փոստից) ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/: «Սիգռամ» ՍՊԸ-ի կողմից 27.05.2021թ.՝ փոստային առաքման միջոցով ուղարկված ծրարը ստացվել է ՀՀ ՊՆ-ի կողմից 03.06.2021թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Սիգռամ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագրի կնքումից:

1.1 կետի համաձայն՝ «Սիգռամ» ՍՊԸ-ն 2021թ. մայիսի 13-ին ծանուցվել է պայմանագիր կնքելու համար, սակայն սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև մայիսի 27-ը, չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, ուստի «Սիգռամ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

ՀՀ ՊՆ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Սիգռամ» ՍՊԸ-ի տվյալները՝ վերջինիս «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու համար: Նշված գրությամբ նշվել է, որ պայմանագիր կնքելու համար սահմանվել է վերջնաժամկետ՝ մինչև մայիսի 27-ը ներառյալ, մասնակիցը 27.05.2021թ. փոստային առաքման միջոցով ուղարկել է պայմանագիրը, սակայն այն ՀՀ ՊՆ ստացել է միայն 03.06.2021թ.: Ուստի ՀՀ ՊՆ, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.04.2021թ. տրված թիվ 01.1/26-1/6440-2021 գրությամբ պարզաբանումը, «Սիգռամ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը

հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Սիգռամ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-12/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝ «Սիգռամ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշվել, որ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Սիգռամ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 13.05.2021թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 27.05.2021թ. ներառյալ:

«Սիգռամ» ՍՊԸ-ն 27.05.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ՍԻԳՌԱՄ» ՍՊԸ-ի իրավաբանական /գտնվելու վայրի/ հասցեն է՝ Արմավիրի մարզ, գ. Նորապար 8: Համապատասխանաբար, «ՍԻԳՌԱՄ» ՍՊԸ-ն 27.05.2021թ. փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով Արմավիրի մարզի ք. Արմավիրի փոստային ծառայությունից (ՍՊԸ-ի գտնվելու վայրի փոստից) ներկայացրել է պատվիրատուին:

Իսկ արդեն համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «ՍԻԳՌԱՄ» ՍՊԸ-ն 2021թ. մայիսի 13-ին ծանուցվել է պայմանգիր կնքելու համար, սակայն սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև մայիսի 27-ը չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, ուստի «ՍԻԳՌԱՄ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

1. Այսպիսով, «Սիգռամ» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (13.05.2021թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (13.05.2021թ.-մինչև 27.05.2021թ. ներառյալ), այն է՝ 27.05.2020թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Սիգռամ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Սիգռամ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված պայմանագիրը չի ներկայացել /տես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն/:

Հատկանշական է, որ 27.05.2020թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Սիգռամ» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է պատվիրատուին, սակայն պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել «Սիգռամ» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Տվյալ դեպքում ընդհանրապես անհասկանալի է, թե նման փաստական հանգամանքների պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ի կետով ինչու է արձանագրվել, որ «Սիգռամ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանգրի կնքումից:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՀՀ ՊՆ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Սիգռամ» ՍՊԸ-ի տվյալները՝ վերջինիս «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու համար: Նշված գրությամբ նշվել է, որ պայմանագիր կնքելու համար սահմանվել է վերջնաժամկետ՝ մինչև մայիսի 27-ը ներառյալ, մասնակիցը 27.05.2021թ. փոստային առաքման միջոցով ուղարկել է պայմանագիրը, սակայն այն ՀՀ ՊՆ ստացել է միայն 03.06.2021թ.: Ուստի ՀՀ ՊՆ, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.04.2021թ. տրված թիվ 01.1/26-1/6440-2021 գրությամբ պարզաբանումը, «Սիգռամ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև հաշվի առնել, որ «Սիգռամ» ՍՊԸ-ի կողմից փոստային առաքման միջոցով ուղարկված պայմանագիրը՝ կից փաստաթղթերով, ՀՀ ՊՆ կողմից ծրարը չբացելով վերադարձվել է Ընկերությանը /չբացված ծրարի արտատպումը ներկայացվել է/:

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»: Իսկ ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «ՍԻԳՌԱՄ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրից կնքելու հրաժարում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, 27.05.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը:

Վերջնաժամկետի հաշվարկի հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Սիգռամ» ՍՊԸ-ի կողմից պահպանվել է պայմանագիր ներկայացնելու վերջնաժամկետը, այն է՝ 27.05.2021թ., քանի որ նախ հենց ՀՀ ՊՆ կողմից սահմանվել է վերջնաժամկետ՝ 27.05.2021թ., ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների

համաձայն՝ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը: Այսինքն պարզ հաշվարկը ցույց է տալիս, որ 13.05.2021թ. պայմանագիր կնքելու ծանուցում ստանալու պայմաններում նշված օրվանից հետո հետո 10 աշխատանքային օրը ավարտվում է 27.05.2021թ. ներառյալ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Սիգռամ» ՍՊԸ-ն նաև ընդունել է armeps համակարգի միջոցով ուղարկված պայմանագրի շնորհումը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է իրեն չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/155 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 3-4 աշխատանքային օրով հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում, իսկ 25.06.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2021թ. թիվ ՊՆ/02/3007-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-12/3» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Սիգռամ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): 2021թ. մայիսի 3-ին «Սիգռամ» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես ընտրված մասնակից: Մասնակիցը 2021թ. մայիսի 13-ին ծանուցվել է պայմանագիր կնքելու համար, սակայն սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև մայիսի

27-ը չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերը ստացվել է փոստային առաքման միջոցով 03.06.2021թ.-ին:

Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.04.2021թ. N ՊՆ/02/1633-2021 պարզաբանման հարցումը և դրան ի պատասխան ուղարկված 28.04.2021թ. N 01.1/26-1/6440-2021 պարզաբանումը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով 01.06.2021թ. Մասնակիցը զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/155 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 10:05-ին և 25.06.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/155 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/155 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-12/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սիգռամ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 03.05.2021թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Սիգռամ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.05.2021թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով «Սիգռամ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում (10 աշխատանքային օրվա ընթացքում) կից գրությամբ ներկայացնել

հաստատված պայմանագրի նախագիծը՝ երկու օրինակից, պայմանագրի և որակավորման ապահովումները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սիգռամ» ՍՊԸ-ն 2021թ. մայիսի 13-ին ծանուցվել է պայմանագիր կնքելու համար, սակայն սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև մայիսի 27-ը չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները և որոշում կայացրել Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2021թ. թիվ 26/26-1/9653-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.06.2021թ. թիվ ՊՆ/02/3007-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Սիգռամ» ՍՊԸ-ի կողմից 24.06.2021թ. ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-12/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սիգռամ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 03.05.2021թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Սիգռամ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.05.2021թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով «Սիգռամ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում (10 աշխատանքային օրվա ընթացքում) կից գրությամբ ներկայացնել հաստատված պայմանագրի նախագիծը՝ երկու օրինակից, պայմանագրի և որակավորման ապահովումները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սիգռամ» ՍՊԸ-ն 2021թ. մայիսի 13-ին ծանուցվել է պայմանագիր կնքելու համար, սակայն սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև մայիսի 27-ը չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները և որոշում կայացրել Ընկերությանը պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

Ընկերությունը 24.06.2021թ. ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ 27.05.2020թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Սիգռամ» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ի հավաստումն նշվածի Ընկերության կողմից ներկայացվել է փոստային անդորրագրի բնօրինակը, համաձայն որի N 2785 առաքանին (կոդ RR297927825AM, ուղարկող «Սիգռամ» ՍՊԸ, ստացող՝ ՀՀ պաշտպանության նախարարություն) «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի Արմավիրի 01 բաժանմունք է հանձնվել 27.05.2021թ.:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **10 աշխատանքային օրվա ընթացքում**, ***չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Սիգռամ» ՍՊԸ-ին պայմանագրի նախագիծը՝ 13.05.2021թ. ներկայացված լինելու պայմաններում, այն պատվիրատուին ներկայացնելու համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 10 աշխատանքային օր ժամկետը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի, հոսել է 14.05.2021թ. և լրացել 27.05.2021թ. ներառյալ, այսինքն՝ Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների հետ միասին «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին հանձնվել են սահմանված ժամկետի պահպանմամբ, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 15.06.2021թ. թիվ 26/26-1/9653-2021 գրությամբ «Սիգռամ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**